

### 3.2. Մեծությունը մի քանի անգամ մեծացնելը, փոքրացնելը (ձանապարհի, ժամանակի որոշում)

#### Երեխայի հետ զբաղվողին

1. Տղաները ժամում 5 կմ արագությամբ 60 կմ անցան: Վերադառնալիս հեծանիվով 2 անգամ արագ էին շարժվում: Տղաները քանի՞ ժամում վերադարձան:

Տղաները գնացել են ժամում 5 կմ արագությամբ, իսկ վերադառնալիս 2 անգամ արագ են շարժվել, այսինքն՝ ժամում 2 անգամ ավելի՝ 10 կմ ( $5 \text{ կմ} \times 2$ ) ճանապարհ են անցել: Եթե ամեն ժամում 10 կմ են անցել, ապա 60 կմ-ն անցնելու համար նրանց  $60 : 10 = 6$  ժամ է անհրաժեշտ (1-ին ժամում 10 կմ, 2-րդ ժամում՝ հաջորդ 10 կմ-ը... մինչև 60 կմ-ը սպառվի):

Կարող էինք նաև այլ կերպ մտածել: Գնալիս ժամում 5 կմ են անցել, ուրեմն 60 կմ-ի վրա  $60 : 5 = 12$  ժամ են ծախսել: Վերադառնալիս 2 անգամ արագ են շարժվել, ուրեմն նույն ճանապարհի վրա ոչ թե 12 ժամ, այլ 2 անգամ քիչ ժամանակ են ծախսել, այսինքն՝ 6 ժամ ( $12 : 2 = 6$ ):

2. Մերենան առաջին օրը 9 ժամում 522 կմ անցավ: Երկրորդ օրը նույն կերպ 7 ժամ շարժվեց: Երկու օրում մերենան քանի՞ կիլոմետր անցավ:


Քանի որ 9 ժամում 522 կմ էր անցել, ուրեմն 1 ժամում (9 անգամ քիչ ժամանակում) 9 անգամ քիչ էր անցել՝  $522 : 9 = 58$  (կմ):

Ամեն ժամում 58 կմ էր անցնում, ուրեմն 7 ժամում (7 անգամ երկար ժամանակում) 7 անգամ շատ՝  $7 \times 58$  կմ ճանապարհ, այսինքն՝ **406 կմ**:



## Արի խնդիր լուծենք

1.



Նավը քանի՞ կիլոմետր կանցնի 5 ժամում:

Վարձատրությունը, 20 մլ:

2.

Շոգենավը երկու օրում 15 ժամ նույն արագությամբ շարժվեց: Առաջին օրը 200 կմ անցավ, երկրորդ օրը՝ 175 կմ: Շոգենավը յուրաքանչյուր օրում քանի՞ ժամ էր շարժվում:

*Կարող եմ նկարելով փեյ սզնել:*

Վարձատրությունը, 1-ից օսեն, 8 գույք՝ 5-ևս օսեն, 1 գույք:

## Ազատ ճավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստատ կլուծես:)

1. Ժամում 35 կմ անցնող գնացքը մեկնումից 2 ժամ հետո տեղ հասավ: Գնացքը քանի՞ կիլոմետր անցավ:
2. Քաղաքից գյուղ տանող ճանապարհը 80 կմ է: Հետիոտները քանի՞ օրում քաղաքից գյուղ կհասնի, եթե օրական 40 կմ անցնի:



3. Չիավորը 28 կիլոմետրը քանի՞ ժամում անցավ, եթե ժամում 14 կիլոմետր էր անցնում:
4. Դահուկորդը ժամում 18 կմ էր անցնում: 3 ժամում քանի՞ կմ կանցնի:
5. Արտակը ժամում 18 կմ էր անցնում և Ա-ից Բ 3 ժամում հասավ: Նույն ճանապարհը քանի՞ ժամում կանցնեք, եթե ժամում 9 կմ անցնեք:
6. Մոտոցիկլավարը 540 կիլոմետրը քանի՞ ժամում կանցնի, եթե ժամում 90 կմ է անցնում:
7. Ավտոմեքենան 4 ժամում 240 կմ անցավ: Եթե ժամում 6 կիլոմետրով ավելի անցնի, 7 ժամում քանի՞ կիլոմետր կանցնի:
8. Գնացքը, որը ժամում 30 կմ էր անցնում, ԱԲ ճանապարհը 6 ժամում անցավ: Ավտոմեքենան, որը ժամում 45 կմ է անցնում, նույն ճանապարհի կեսը քանի՞ ժամում կանցնի:
9. Դահուկորդը 3 ժամ շարժվեց՝ ժամում 12 կմ անցնելով: Նույն ճանապարհը ես ինչքա՞ն ժամանակում կանցնեմ, եթե մի ժամում 6 կմ եմ անցնում:
10. Ինքնաթիռը 2 ժամում 960 կմ է անցնում: Նույն ճանապարհը քանի՞ ժամում կանցնի այն ինքնաթիռը, որը 2 անգամ արագ է թռչում:
11. Մի քաղաքից մյուսը հեծանվորդը 4 ժամում զնաց՝ ժամում 14 կմ անցնելով: Նույն ճանապարհը հետիոտն ինչքա՞ն ժամանակում կանցնի, եթե ժամում 7 կմ է անցնում:

